ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ-Ի ՈՒՂԻՆԵՐԸ

Աշուն 2008 N 3

ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

Թող յոյսի Աստուածը լիացնի ձեզ ամենայն ուրախութեամբ եւ խաղաղութեամբ, որպէսզի Սուրբ Հոգու զօրութեամբ դուք յոյսով առատանաք: Հռոմեացիներ 15:13

Սիրելի ԲԱՐԵԿԱՄ

Պատմություն դարձավ «Հուսո ճանապարհ» հասարակական կազմակերպության ևս մեկ ծրագրային ծառայության շրջան՝ գարուն-ամառ 2008-ը: Այդ ամիսներին շարունակվեցին երիտասարդական և պատանեկան քրիստոնեական ծրագրերը: Մարտ-մայիս ամիսներին իրականություն դարձավ նաև նախօրոք ծրագրված՝ մեծահասակների (40 և ավելի տարիք ունեցող) քրիստոնեական ծրագիրը, որն, իրականացվելով առաջին անգամ, ունեցավ դրական արձագանք:

Հունիս ամսին Սևանում տեղի ունեցավ հոգևոր սեմինար պատանի մարզիկների համար՝ «Սպորտ և հավատ» թեմայով:

Ծրագրերով հագեցած էրն նաև ամռան ամիսները. հունիս-հուլիս ամիսներին ունեցանք հոգևոր զրույցների շարք կազմակերպության գրասենյակում:

Յուրաքանչյուր ծրագրի ավարտ նշանավորվում է դեպի հայաստանյաց եկեղեցիներ կատարվող ուխտագնացություններով, որոնք ավելի ու ավելի են հարստացնում յուրաքանչյուր քրիստոնյայի հոգևոր աշխարհը:

Ահա, աշխատանքների այսպիսի պաշարով էլ ցանկանում ենք թևակոխել նոր՝ աշուն-ձմեռ 2008 ծրագրային ժամանակաշրջանը, որի ընթացքում Աստծո կամքով կշարունակվի մեր գործունեությունը: Կունենանք նաև նոր՝ «Հովհանու Ավետարանի սերտողություն» ծրագիրը:

Համոզված ենք, որ Աստծո կամոք և օրհնությամբ «Հուսո ճանապարհ» հասարակական կազմակերպությունը կշարունակի իր առաքելությունը ի փառս Աստծո և մեր եկեղեցու:

Մեր Նահապետյան
պատանեկան ծրագրերի կազմակերպիչ

«Սպորտ և հավատ» սեմինար պատանի մարզիկների համար
Հունիս - 2008

Պատանեկան ծրագրեր
Գարուն 2008

Պատանեկան ծրագիր Մեծամոր քաղաքում
Գարուն - 2008

Պատանեկան քրիստոնեական ծրագիր
գ. Զրաշեն, թիվ 107 դպրոց
(ուխտագնացություն Բյուրավանի
սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցի)
Գարուն - 2008

«Հոգու պտուղներ» ծրագիր պատանիների
համար գ. Զրաշեն, թիվ 107 դպրոց
Գարուն - 2008

Երիտասարդական ծրագրեր

4-րդ Քրիստոնեական երիտասարդական ծրագիր
Ապրիլ - 2008

2-րդ «Հոգու պտուղներ» դասընթաց
Մայիս - 2008

Քրիստոնեական ծրագիր մեծահասակների համար

2008 թվականի գարնանը իրականացավ նաև ծրագիր մեծահասակների համար: Այն շատ արդյունավետ էր, որովհետև խորհրդային ժամանակաշրջանն ապրած մարդիկ հնարավորություն չեն ունեցել լսել Աստծո խոսքը: Ծրագրի ընթացքում մեր մասնակիցները նախնական գիտելիքներ ստացան քրիստոնեության և քրիստոնեական ապրելակերպի մասին:

Մայիս - 2008

Ուխտագնացություն Մեղրածոր
Սբ. Թայչարխավանք եկեղեցի
Հունիս - 2008

Քրիստոնեական զրույցներ

2008թ. հունիս-հուլիս ամիսներին «Հուսո ճանապարհ»-ի գրասենյակում կազմակերպվեցին հոգևոր զրույցներ, որոնց հյուրընկալվում էին հոգևոր դասի ներկայացուցիչներ: Զրույցների ընթացքում քննարկվում էին թեմաներ, որոնք կարող են օգնել քրիստոնիային՝ դիմագրավելու կյանքի մարտահրավերներին:

Հուլիս - 2008

Աշուն-Ձմեռ - 2008
Հոկտեմբեր-Դեկտեմբեր

- Երիտասարդական քրիստոնեական ծրագիր (Արարատյան թեմի Առաջնորդարանի դահլիճում):
- Քրիստոնեական ծրագիր մեծահասակների համար («Կոզեռն» կենտրոնում):
- «Հոգու պտուղներ» ծրագիր երիտասարդների համար: («Հուսո ճանապարհ» գրասենյակում)
- Հովհաննու Ավետարանի սերտողություն: («Հուսո ճանապարհ» գրասենյակում)
- Պատանեկան քրիստոնեական ծրագիր Զրաշեն գյուղի թիվ 107 դպրոցում:
- «Հոգու պտուղներ» ծրագիր պատանիների համար:

Ինչպե՞ս կարող ես օժանդակել մեր ծրագրերին

- Եթե ընկերդ դժվարանում է մասնակցել ծրագրերին՝ ֆինանսական պատճառով, վճարիր նրա փոխարեն:
- Աջակցիր հյուրասիրություններին, ինչով կարող ես...
- Նվիրիր Աստվածաշունչ կամ այլ հոգևոր գրականություն:
- Կամավոր մասնակցիր պատանեկան, երիտասարդական, «Փարոս» ծրագրերին:

ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

«Հուսո Ճանապարհ»
երիտասարդական կրթամշակութային
հասարակական կազմակերպություն

www.wayofhope.am
Հեռ./ ֆաքս (+37410) 55 34 38
էլ. փոստ: staff@wayofhope.am

ՀՀ Երևան 0010
փոստարկղ 41
Չարենցի 28/6